

ցած աստուածաբանական *Նոր-Թոմականություն*⁵ (Neo-Tomism) կոչուած շարժումը կամ ուղղութիւնը, որ ազդեցութիւնը կը կրեն յիշեալ *Դպրական փիլիսոփայութեան*⁶ :

Մինչեւ այսօր, «*Քրիստոնէական փիլիսոփայութեան*» նիւթին շուրջ եղած քննարկումներն ու սուր վիճաբանութիւնները տակաւին չեն աւարտած եւ այդ առնչութեամբ վերջնական եզրակացութիւն մը կարելի չէ ներկայացնել:

Ստորեւ կարգ մը դիրքորոշումներ, Նոր Դարաշրջանի նշանաւոր փիլիսոփաներէն.-

- Գերման նշանաւոր փիլիսոփայ եւ «*Երեւութաբանութիւն*» (Phenomenology) փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ **Մ. Հայտեգէր** (Martin Heidegger, 1889 – 1976 թ.), իր ամբողջական երկերու 9-րդ (Էջ 45-78) եւ 40-րդ (Էջ 9) հատորներուն մէջ, կ'անդրադառնայ վերոյիշեալ բառակապակցութեան եւ քրիստոնէական փիլիսոփայութիւնը, պարզապէս, որպէս «*թիւրիմացութիւն*», կը նմանեցնէ «*փայտեայ երկաթ*»⁷ բառակապակցութեան:
- Չուիցերիացի նշանաւոր բողոքական-աստուածաբան **Կ. Բարթ** (Karl Barth, 1886 – 1968 թ.), իր 13-հատորեան «*Եկեղեցական վարդապետութիւն*» (գերմ. բնագիր՝ kirchliche Dogmatik) կարեւոր նկատուող երկին մէջ (հատոր 2/1, Էջ 93), «փիլիսոփայական աստուածաբանութիւնը» (Philosophical Theology) կը նկատէ «*դաւադրութիւն՝ ընդդէմ քրիստոնէական Աստուած հասկացութեան*» (գերմ. բնագիր՝ *Attentat auf den christlichen Gottesbegriff*):
- Գերման նշանաւոր կաթոլիկ-աստուածաբան **Է. Արենս** (Edmund Arens, *1953 թ.) իր 2001 թուականին հրատարակուած «*Փիլիսոփայութիւն եւ Աստուածաբանութիւն*» (գերմ. բնագիր՝ Philosophie und Theologie) մենագրութեան մէջ կը յիշատակէ ընդհանրապէս փիլիսոփայութեան կարեւորութիւնը՝ աստուածաբանութիւնը սերտելու համար:

5 **Նոր-Թոմականութիւն** (Neo-Tomism).-

Փիլիսոփայ-աստուածաբան *Թոմաս Աքուինացիի* (Thomas Aquinas, 1224 – 1274 թ.) ուսմունքին վրայ հաստատուած 19-րդ դարու աստուածաբանական Նոր ուղղութիւն, որ կը շեշտաւորէր փիլիսոփայական բնագիտութեան (Metaphysics, մետաֆիզիկա) ոլորտի գոյութեան եւ էութեան իմաստները: *Թ. Աքուինացիի* կարեւոր երկերէն կը նկատուի *De ente et essentia* (Գոյութեան եւ էութեան մասին), որ կազմուած է նախաբանէ մը եւ 6 գլուխներէ:

6 **Դպրական փիլիսոփայութիւն** (Scholastic philosophy).-

Միջնադարեան փիլիսոփայութիւն, որ սկսած է 9-րդ դարուն եւ երկարած մինչեւ Միջնադարու աւարտը (15-րդ դար): Կը յատկանշուի դպրոցներու եւ համալսարաններու հաստատումով եւ ուսման իւրայատուկ եղանակով: Կը յատկանշուի նաեւ փիլիսոփայ-աստուածաբաններու կողմէ մատուցուած Աստուծոյ գոյութեան ապացոյցներով եւ անոնց քննարկումներով: Այս ոլորտի մէջ կան բազմաթիւ նշանաւոր փիլիսոփայ-աստուածաբաններ:

7 **Մարտին Հայտեգէրի** յիշեալ խօսքի գերմաներէն բնագիրը.-

„Eine christliche Philosophie ist ein hölzernes Eisen und ein Mißverständnis“.